DOI: https://doi.org/ 10.59630/25792644-2024.1.26-82

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԷԼԻՏԱՅԻ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿ

ԳԱՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր - ներքաղաքական խոսույթ, վիրտուալ տիրույթ, քաղաքացիական հասարակություն, պատասխանատվության վերաբաշխում, կոնտենտ անալիզ:

ԱՌԱՋԱԲԱՆ

Հոդվածը նպատակ է հետապնդում քաղաքագիտական ուղենիշների խորքային վերլուծության միջոցով վեր հանել տեղական գործընթացների ազդեցության տիրույթները Հայաստանի Հանրապետության ապագայաբանական քննարկումներում ռազմավարական տեսլականի բազմաձևության տեսակետից: Մի կողմից, հակված ենք ներառելու բովանդակային ընդարձակ խոսույթի հորիզոնում տեղ գտած հակասությունների, քաղաքական անորոշությունների, քաղաքական տուրբուլենտության նվազող կամ ահագնացող դրսևորումների տեսական պարզաբանումներ[1]՝ քաղաքական հաղորդակցության վրա վիրտուալ հարթակ-

[1] Քաղաքական տուրբուլենտութեան վերծանման համար հիմք ենք ընդունում Ջեյմս Ռոզենաուի «Տուրբուլենտութիւնը համաշխարհային քաղաքականութեան մէջ» (Turbulence in World Politics, Princeton University Press, 1990) աշխատութիւնը, որում հեղինակը մասնավորապէս ասում է, որ համաշխարհային քաղաքական բեմի զարգացումներն ըմբռնելու համար անհրաժեշտ է «լինել իրազեկված այն մասին, թե տեսակետդ դիտարկում է հետմիջազգային (postinternational) քաղաքականութիւնը որպէս համատարած քաոսի վրա հիմնված, թե՞ հիմնարար (underlying) կառուցվածքների» (էջ 48):

ների ազդեցությամբ պայմանավորված։ Մյուս կողմից՝կարևորելով քաղաքական իրողություններին սթափ գնահատականներ տալը՝ առաջարկում ենք հետապատերազմյան ՀՀ-ում ընդդիմադիր էլիտայի ներկայացուցիչների կողմից ստեղծված խոսույթը «Ֆեյսբուք» վիրտուալ ցանցում դիտարկել որպես ներազգային քաղաքական գործընթացների զարգացումը, քաղաքական տուրբուլենտությունը, վերլուծելու անկյունաքարային եզր։

Նկատի ունենալով քաղաքական հաղորդակցության մեջ սոցիալական հարթակների մեծացող կարևորությունը՝փորձ ենք արել վերոնշյալ շառավիղներով արծարծել հայկական ընդդիմադիր ընտրանու խոսույթում ուրվագծվող հիմնախնդիրները[1]։

Հոդվածում համակարգային մոտեցման համատեքստում կիրառվել է որակական կոնտենտ անալիզի մեթոդը (qualitative content analysis)։ Ընդդիմադիր ընտրանու ֆեյսբուքյան գրառումների բովանդակության համակարգային վերլուծությամբ փորձել ենք գտնել քաղաքական ենթատեքստեր և օրինաչափություններ։ Ստացված արդյունքների քննարկումից պարզ է դառնում, որ հետահայաց վերլուծությունն ունի քաղաքական խնդիրների բացահայտման նշանակություն։ Ուսումնասիրության է ենթարկվել 2021 դեկտեմբերի 1-ից 2022 փետրվարի 25-ն ընկած ժամանակահատուածում երկու ընդդիմադիր քաղաքական գործիչների «Facebook» սոցիալական հարթակի պաշտոնական էջերի գրառումներն ու տեղեկատվությունը։ Ժամանակահատվածը համընկնում է այն փուլին, երբ անհրաժեշտություն էր առաջացել համակարգել ընդդիմադիր էլիտայի ներկայացուցիչների ստեղծած վիրտուալ քաղաքական բովանդակությունը որպես ներքաղաքական զարգացումների չափորոշիչ։ Հետպատե-

[1] Երկու ընդդիմադիր գործիչների ընտրությունը պայմանավորված է գլխավորապես նախքան 2018 թվականը ՀՀ կառավարող ընտրանու մաս կազմելու, ՀՀ կառավարությունում և ԱԺ-ում կարևոր նշանակության պաշտոններ զբաղեցնելու, հարուստ քաղաքական կենսագրության ու հետպատերազմյան ժամանակաշրջանում որպես ակտիվ ընդդիմադիր դիրքավորվելու հետ։ Երկու քաղաքական գործիչները շարունակում են մասնակցել ներքաղաքական գործընթացներին, ակտիվորեն օգտագործում են «Facebook» սոցիալական հարթակը հանրային-քաղաքական խոսույթ ձևավորելու նպատակով։ Քաղաքական ենթատեքստերից, ուղերձներից խուսափելու նպատակով խմբագրության որոշմամբ չենք հրապարակում ընդդիմադիր գործիչների անունները, քանի որ այն համոզմունքն ունենք, որ դրանից կարող էր տուժել հոդվածի գիտականությունը։

բազմյան բողոքի ալիքի արդյունքում 2021 թվականի հունիսի 20-ին[1] Հայաստանում անցկացվեց արտահերթ խորհրդարանական ընտրություն: Առանձին ընդվզումներից զատ վերոնշյալ քաղաքական իրադարձությանը հաջորդող ամենակարևոր քաղաքական դեպքը թերևս Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի հեռանալն էր 2022 հունվարի 23-ին[2]: Ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է եղել հենց նախագահի հրաժարականին նախորդող և դրան հաջորդող զարգացումների ենթախորքի օրինաչափությունները հասկանալու ձգտումով: 2022 թվականի ուշ գարնան քաղաքական անցուդարձի ակտիվացմանը նպաստեցին ընդդիմության զանգվածային գործողությունները[3], որոնք դրսևորվեցին նաև մայիսի մեկի մեծ հանրահավաքին նախորդող և հաջորդող բովանդակային քննարկումներով: Քաղաքական շահարկումներից խուսափելու նպատակով ընդդիմադիր գործիչներին պայմանականորեն կսկսենք «առաջին քաղաքական գործիչ» և «երկրորդ քաղաքական գործիչ» ձևակերպումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական մեդիայում տարածվող քաղաքական բովանդակությամբ գրառումները քաղաքական հաղորդակցության ձև են: Դրանց հղած ուղերձները, հուզական բնույթը, տեղեկատվություն-ապատեղեկատվություն չափումներին հարելու միտումը տեղորոշվում են քաղաքական հաղորդակցության գիտական սահմանումներում: Թեման խորությամբ ուսումնասիրելու անհրաժեշտություն է առաջացել հետպատերազմյան Հայաստանում քաղաքական տուրբուլենտության պայմաններում: Այսպես, Բրայն Մքնայերի կարծիքով քաղաքական հաղորդակցության բազմաձևությունն արտահայտվում է միկրո՝ անհատական և մակրո մակարդակներում: Առաջինի դեպքում անհատը հանդես է գալիս որպես «ուղերձի սպառող», իսկ մակրո մակարդակի հետ գործ ունենք այն ժամա-

[1] ԱԺ արտահերթ ընտրություններ https://www.elections.am/Elections/Parliamentary

[2] ՀՀ նախագահը հրաժարական է տալիս https://www.azatutyun.am/a/31667445.html

[3] Protesters demand resignation of Armenian PM, opposition walks out, May 4, 2022 https://www.reuters.com/world/europe/protesters-block-streets-armenian-capital-call-pms-resignation-2022-05-04/

նակ, երբ «քաղաքական հաղորդակցությանն առանձին պատասխանները կուտակվում են ձևավորելու հանրային կարծիքի հարցումներն ու հավաքական քաղաքական կամքի այլ ցուցիչներ»:[1] Ասվածը կարևոր է այն առումով, որ մեր հետազոտության հիմնական թեման հենց հանրային խոսույթի բովանդակությունն է, իսկ մենախոսություններն ու երկխոսությունները կամ դրանց փոխանակումների արդյունքում ձևավորված «բազմախոսությունը»[2] քաղաքական հաղորդակցության միկրո և մակրո մակարդակների օրինակներ են:

Բրայն Մքնայերն այս համատեքստում վկայակոչում է նախորդ դարի 60-ականներին Ումբերտո Էկոյի կատարած հետազոտությունը, որի համաձայն «մեդիայի ուղերձների ազդեցությունը հասկանալը պահանջում էր տվյալ հաղորդակցային իրադրության սոցիալական իմաստաբանության ընկալում՝ընդունելով ուղերձը տարբերակված կերպով վերծանելու հնարավորությունը, որը միշտ առկա է, իմաստների բազմակիությունը, որն այն կարող է ձեռք բերել տարաբնույթ խմբերում ու անհատների մոտ, ովքեր կազմում են դրա լսարանը և բազմազան արձագանքները, որ այն կարող է առաջացնել»:[3] Հիմնախնդիրը կարևորվում է նաև այն առումով, որ «մեդիայի և քաղաքական գործընթացի միջև հարաբերությունը դիալեկտիկական է, որը ներառում է գործողություն և արձագանք (action and reaction)»:[1]

Սոցիալական հարթակները, սակայն, մասնակցության նոր ձևաչափ ստեղծելու հնարավորությունից զատ, մեծացնում են սոցիալական հարաբերություններում առկա խզումներով պայմանավորված ռիսկերը: Այսպես, Էնդրյու Ֆինբերգի կարծիքով «համացանցի ոչ հիերարխիկ կառուցվածքը անանունությունը հնարավոր է դարձրել ոչ միայն սոցիալական շփման մեջ, այլև հենց ցանցային մակարդակում: Ի թիվս այլ կիրառությունների, անանունությունը համացանցում օժանդակել է տարաբնույթ հակասոցիալական, խարանված (stigmatised) անօրինական գործու-

[1] McNair B., An Introduction to Political Communication, Third Edition, Routledge, 2003, p.29

[2] «Բազմախոսություն» հասկացության ներմուծմամբ փորձ ենք արել արժևորել և դասակարգել բազմաթիվ դերակատարների միջև ընթացող խոսքային և նշանային բազմաշերտ հարաբերությունները որպես քաղաքական հաղորդակցության առանձին ձև:

[3] Ibid., p.31

նեության»:[2] Թերևս գլխավորապես այս պնդումով է պայմանավորված քաղաքական տուրբուլենտությունը սոցիալական մեդիայում ձևավորված խոսույթի ոսպնյակով դիտարկելու մեր ձգտումը: Ասվածը կարևորվում է հատկապես այն առումով, որ «ձևերի տարբեր համադրումները և համապատասխան կիրառությունները ունեն տարբեր սոցիալական նշանակություն և հետևանքներ»:[3]

Այնուամենայնիվ, պատասխանատու քաղաքական և սոցիալական վարքաբանության տեսակետից կարևորում ենք համացանցի դրական հաղորդակցային հնարավորությունների դիտարկումը գիտական մեկնաբանությամբ: Այսպես, Քրիստիան Ֆուկսը հիմնավորում է, որ «առցանց սոցիալական կյանքը (sociality) նոր չէ: Ֆեյսբուքի ու նմանատիպ հարթակների կոնկրետ կողմ է այն, որ նրանք ինտեգրում են գործիքներ, որոնք օժանդակում են սոցիալական կյանքի տարբեր ձևերի մեկ հարթակում: Դրանք ըմբռնման (cognition), հաղորդակցության և համագործակցության գործիքներ են»:[4] Ավելին, «ժամանակակից հասարակությունը սոսկ տարբերակված սոցիալական տիրույթների վրա հիմնված չէ, այլ նաև այն տարբերակված դերերի, որ մարդիկ ստանձնում են այդ տիրույթներում: Հանրային տիրույթում մարդիկ չեն գործում մեկուսի, այլ միասնաբար»:[5]

Տարբերակված դերերի առումով հատկանշական է Լինդա Լի Քայդի և Քրիստինա Հոլց-Բաչանի՝ սոցիալական բազմադերային միջավայրի, ընկալումների ձևավորման և նշանային ուժային հարաբերությունների մասին այն մեկնաբանությունը, որ «դրամատուրգն օգտագործում է լեզու երկխոսության մեջ կերտելու մի աշխարհ, որում իր կերպարները գործում են: Այս լեզվով քաղաքական դերակատարները բնութագրում են աշխարհի իրական իրադարձությունները, ձևավորում են դրանց ընկալումը, կազմակերպում են դրանց շուրջ ուժային հարաբերությունները (relations of power) և ուղղորդում դրանց ուղղված պատասխանը: Քաղաքական հա-

---

[1] Ibid., p.47

[2] **Feenberg A.,** Great Refusal or Long March How to Think About the Internet in Christian Fucks and Marisol Sandoval, Critique, Social Media and the Information Society, Routledge Studies in Science, Technology And Society, 2014, p.115

[3] Ibid., p.116

[4] **Fucks Ch.,** Culture and Economy in the Age of Social Media, Routledge, 2015, p.317

[5] Ibid., p. 321

կամարտությունն առաջանում է այս մեկնաբանությունների ու պատասխանների տարբերություններից»:[1] Ասվածը սույն հետազոտության տեսակետից կարևոր է այն առումով, որ հաղորդակցության տիրույթում փոխըմբռնում-խզում երկակի միջավայրում առաջացած հակամարտությունների հավանականությունը ընդգծում է սոցիալական հարթակներում ծավալվող մենախոսությունների և երկխոսությունների կարևորությունը:

Առկա է տեսակետ առ այն, որ «մեդիայի վրա կենտրոնացած ժողովրդավարությունը հնարավոր է ունի հանրային մեկուսացման (disengagement) բարձր մակարդակ և հանրության ու իր ներկայացուցիչների միջև կապի խափանում (fracturing)»:[2] Վերոնշյալ պնդումն ընդգծում է հետպատերազմյան Հայաստանում սոցիալական մեդիայում քաղաքական ու հասարակական դերակատարների ստեղծած խոսույթի ուսումնասիրության կարևորությունը: Սոցիալական հարթակների քաղաքական բովանդակությամբ շարադրանքն անտեսելն ու դրան գնահատական չտալը քաղաքական ապագաբանության տեսակետից կլիներ անհեռատես, քանի որ, ինչպես մասնավորեցնում է Դարեն Լիլիկերը, «քաղաքական հաղորդակցությունը հիմնվում է պարզեցված կրկնիր-հիշեցրու հանրային հարաբերությունների առաջնորդությամբ գործող ռազմավարության վրա»:[3] Նմանատիպ իմաստային ծիրում ամերկացի գիտնական Նոամ Չոմսկին կարծում է, որ «պետական քարոզչությունը, երբ աջակցություն է ստանում կրթված դասերի կողմից և երբ դրանից շեղում չի թույլատրվում, կարող է մեծ ազդեցություն ունենալ»:[1] Այստեղ, հանրային հարաբերությունների առաջնորդությունը փոխակերպվում է պետական քարոզչության, սակայն «կրթված դասերի» աջակցությունը վերստին ընդգծում է քաղաքական հաղորդակցության բազմաշերտությունը:

Պետություն-հասարակություն երկճյուղման և հանրային փոխառնչությունների իմաստով կարևոր ենք համարում Սարա Սալեմի՝ սոցիալական մեդիայի դերակատարման վերլուծությունը 2011 թվականի ե-

---

[1] **Lee Kaid L. and Holtz-Bacha Ch., "**Dramatistic Approaches to Political Communication", Encyclopedia of Political Communication: Volume 1&2, Sage Publications, 2008**,** p.193

[2] **Lilleker D. G.,** Key Concepts in Political Communication, Sage Publications, 2006, p.113

[3] Ibid., p.116

գիպտական հեղափոխության համատեքստում: Հեղինակը ապացուցում է, որ «Եգիպտոսում սոցիալական ցանցերը (social media) ներկայացնում էին այլընտրանքային հարթակ, որն անհատները կարող էին օգտագործել քննարկելու, բանավիճելու հասարակական խոսույթներն այնպիսի ուղիներով կերպափոխելու համար, որոնք բացահայտ կերպով մարտահրավեր չէին նետում պետության գերակայությանը հանրային ոլորտում: Սա ազդեցություն ունեցավ պետության և սոցիալական շարժումների հարաբերության վրա հատպապես ապստամբությանը (uprising) նախորդող տարիներին, երբ շատ շարժումներ ուժեղ առցանց ներկայություն ունեին»:[2] Այսպիսով, «սոցիալական հարթակներն (social media) իրենցից ներկայացնում են տարբեր պատումների՝ հանրային տիրույթ մուտք գործելու միջոց ու հետևաբար մրցում են վերնախավի կողմից քարոզվողների հետ՝ ինչ-որ իմաստով ժողովրդավարացնելով հանրային տիրույթը (public space)»:[3] Հետապետրազմյան Հայաստանում հանրային տիրույթի տուրբուլենտությունն այսպիսով դառնում է հետազոտական արդիական բնագավառ:

Հանրային տիրույթի ներքին հակասությունները, սակայն, չեն սահմանափակվում պետություն-հանրություն շահային տարբերակվածությամբ: Մուռեյ Էդելմանի կարծիքով «որոշակի տեսակետ ունեցող խմբերը հաճախ համոզված են, որ պետք է անտեսեն այլոց պնդումները (claims)՝ նրանց իսկ շահերից ելնելով»:[4] Այսպիսով, սոցիալական խմբերը մրցում են ոչ միայն միմյանց դեմ, այլև հանրային շահի գիտակցումով, իսկ խզման գծերից խուսափել նշանակում է հասկանալ քաղաքական հաղորդակցության, ներառյալ՝ սոցիալական հարթակների խոսույթի, օրինաչափությունները: Հենց այս օրինաչափությունների որոշակիացնումն է սույն հետազոտության առանցքային ուղենիշներից մեկը:

---

[1] **Chomsky N.,** Media Control: The Spectacular Achievements of Propaganda, Open Media Pamphlet Series, 1997, p.6.

[2] **Salem S.,** "Creating Spaces for Dissent: The Role of Social Media in the 2011 Egyptian Revolution" in Daniel Trottier and Christian Fucks (eds.), Social Media, Politics and the State: Protests, Revolutions, Riots, Crime, and Policing in the Age of Facebook, Twitter and Youtube, Routledge, 2015, p.176

[3] Ibid., p.178

[4] **Edelman M.,** The Politics of Misinformation, Communication, Society and Politics Series, W. Lance Bennett and Robert M. Entman (eds.), Cambridge University Press, 2001, p. 15

Մարդկային քաղաքակրթության փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիներին հուզական իմաստով գրավող հաղորդակցային ռազմավարությունները «հանրային խոսույթը դարձրել են ավելի բևեռացված ու գնալով ավելի դժվար է հասնել քաղաքական փոխըմբռնման ու պահպանել սոցիալական միասնականությունը (cohesion)»:[1] Եթե սրան հավելենք նաև այն փաստը, որ «մշակութային բնորոշ գծերը (features) ևս մեծապես վճռում են՝ ինչ է հնարավոր ասել կամ չասել կոնկրետ տեղում և կոնկրետ ժամանակ»[2], ապա ակնհայտ է դառնում, որ տարբեր գիտաճյուղերի տրամադրած փաստարկների ու վերլուծական նյութի նկատմամբ համակարգային մոտեցմամբ է միայն հնարավոր վեր հանել քաղաքական խոսույթի ու հաղորդակցության համացանցային դրսևորումների նշանակությունը: Թերևս այս նկատառումներով գիտնականները խոսում են «լեգիտիմ ազդեցության և ոչ լեգիտիմ մանիպուլյացիայի միջև»[3] տարբերությունից: Օֆեր Ֆելդմանը և Սոնյա Զմեռլին նաև պնդում են, որ ամենօրյա ապատեղեկատվությունը «նպաստում է հատվածականությանը (tribalism) և տեսակետների բևեռացմանը մի շարք հասարակական հարցերի վերաբերյալ»:[4]

Ավելին, սոցիալական հարթակներում լայն տարածում են գտնում այն ուղերձները, որոնցում առկա են «հուզական արձագանքի սադրանք, ազդու վիզուալ բաղադրիչի առկայություն, ուժեղ պատում (narrative) և կրկնություն»:[5]

Սոցիալական հարթակները որպես հանրային խոսույթի ծավալման օրեցօր կարևոր դարձող միջավայր պահանջում են հրատապ ուսումնասիրություն: Բովանդակային առումով հարստացնելով քաղաքական խոսույթն ընդհանրապես՝դրանք կարող են ստեղծել ոչ միայն քաղաքական հակամարտությունների համար պարարտ հող, այլև հասարակական համերաշխության և երկխոսության առաձգական տիրույթ: Անհրաժեշտ է նկա-

---

[1] **Feldman O. and Zmerli S.** (eds.), the Psychology of Political Communicators: How Politicians, Culture, and the Media Construct and Shape Public Discourse, Routledge, 2019, p.2

[2] Ibid., p.3

[3] **Jones K.,** International Law Programme | November 2019, Online Disinformation and Political Discourse Applying a Human Rights Framework, Chatham House, the Royal Institute of International Affairs, p.2

[4] Ibid., p.8

[5] Ibid., p.9

տի ունենալ, որ «սոցիալական միջավայրը պետք է ոչ միայն հավաքների ազատության հնարավորություն տա, այլև նպաստի մի շարք միջոցների, որոնցով քաղաքացիները կարող են հնչեցնել իրենց ձայնը հանրային կյանքում՝ հատելով հասարակական անջրպետները (cleavages)»:[1]

Նոր հորիզոնների բացահայտումը կապված է քաղաքական ու քաղաքակրթական իրողությունների «մետա» մակարդակի ուսումնասիրութեան հետ:[2] Անդրադարձ կատարելով մեծաքանակ տվյալների հիման վրա մոդելավորման հարցին, Ջոզեֆսոն Ստորմը գրում է. «առավելապես հռետորական քայլերը, որոնք առաջին մակերեսային հայացքից համոզիչ են, ավելի խորը վերլուծությամբ ցույց են տալիս, որ թվացյալ զուգահեռները չունեն խորքային նյութական ընդհանրություն (shared substance): Թվում է, թե գիտությունն օգտակար է հումանիստների համար հիմնականում երբ այն վերահաստատում է այն, ինչ հումանիտար գիտությունների կողմից արդեն իսկ ընկալվում է որպէս փաստ»:[3] Այսպիսին են այսօր Հայաստանի Հանրապետության կենսունակությունը վիճարկող մակերեսային վերլուծությունները:

Հայ քաղաքագետների աշխատանքից առանձնակի ուշադրության են արժանի ոլորտին առնչվող որոշ աշխատանքներ: Այսպես, քաղաքագետ Ռ. Մելիքյանը միջազգային քաղաքական հաղորդակցության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զալիս է այն եզրակացության, որ «սոցցանցերը տեղեկատվական պատերազմների գործիքներ են»[4], իսկ դրանցից օգտվելու համար անհրաժեշտ են «բարձր մտավոր ռեսուրսներ և գաղափարախոսական գայթակղող միջավայր»:[5] Այս դրույթն ընդգծում է սոցիալական հարթակներում ձևավորված խոսույթի ուսումնասիրության կարևորությունը քաղաքական հաղորդակցության խնդիրների բացա-

---

[1] **Himelboim I.,** Civil Society and Online Political Discourse: The Network Structure of Unrestricted Discussions, Communication Research XX(X) 1 –26 © The Author(s) 2010 Reprints and permission: http://www.sagepub.com/journalsPermissions.nav, p.5 DOI: 10.1177/009 3650210384853 http://crx.sagepub.com

[2] **Storm J. A. J., Metamodernsm:** The Future of Theory; The University of Chicago, 2021, p.1

[3] Ibid, p.30

[4] **Ռ. Մելիքյան,** Միջազգային քաղաքական հաղորդակցությունների հիմնախնդիրները տեղեկատվական անվտանգության հարացույցում, ԵՐԵՎԱՆ, հեղինակային հրատարակություն, 2020, էջ 136

[5] Նույն տեղը, էջ 135

հայտման տեսակետից։ Ասվածը տեղորոշվում է քաղաքական մշակույթի համայնապատկերում այն իմաստով, որ «միակ տարրը, որն առկա է բոլոր մշակույթներում, լեզուն է, որի գործողության արդյունքը խոսույթն է, քաղաքական մշակույթի դեպքում՝ քաղաքական խոսույթը»[1]։ Ուստի, հոդվածը հավակնում է լինել հայրենական մասնագիտական գրականության մեջ առաջին աշխատանքը, որը քաղաքական խոսույթ-հաղորդակցություն-սոցիալական հարթակներ տիրույթում փորձ է անում վեր է հանել արդի ներքաղաքական հիմնախնդիրները։

ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ԵՒ ԴՐԱ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր է ընդգծել, որ համարելով նախահեղափոխական և հետհեղափոխական ժամանակաշրջանում քաղաքական ֆիգուրների վարքաբանությունն ընդդիմադիր էլիտայի կառավարման ժամանակահատվածի հետ աղերս չունեցող երևույթ՝ ընդդիմադիր էլիտան խիստ քննադատական կեցվածք է որդեգրում նախագահ Արմեն Սարգսյանի նկատմամբ նրա կառավարման ավարտին։ Ընդ որում նախագահի հրաժարականից հետո նրա պաշտոնավարումը բնորոշելով «թուլամորթ»՝ այդպիսին է որակվում նաև նրա հեռանալը զբաղեցրած պաշտոնից առաջին քաղաքական գործչի կողմից։ Այս համատեքստում կարևոր է այն կանխատեսումը, որն արվում է նախագահի հրաժարականից հետո. «Հայաստանի գլխին կախված ամպերից նոր ուժեղ շանթ է գալու մեր գլխին արտաքին աշխարհից»։ Իսկ ինչո՞վ է պայմանավորված նախագահի հրաժարականի չարագուշակ լինելը, որո՞նք էին նախագահ Արմեն Սարգսյանի միջազգային կապերն ու առնչությունները, որոնք կարող էին նախագահին դրդել նմանօրինակ քաղաքական վարքի, ով նախահեղափոխական, հեղափոխական, նախապատերազմական, հետպատերազմական, նախընտրական և հետընտրական փուլերում չէր հրաժարվում նախագահի իր առաքելությունից։ Ինչպես կարելի էր ակնկալել, ընդդիմադիր էլիտան հմտո-

[1] **Օրդուխանյան Է.,** Քաղաքական խոսույթի հիման վրա հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերի գնահատման հնարավորություններն ու խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես, 1(2), 2015, էջ 68

րեն խուսանավում է բարդ հարցերից՝ջնջելով նախկինում պետական կառավարման համակարգի կայացրած քաղաքական որոշումների և հետհեղափոխական ու հետպատերազմյան իրողությունների միջև երևակայական կամ թաքնահարույց կապերը։ Այս իմաստով քաղաքական պատասխանատվության տիրույթում առաջանում է «պատասխանատվության վերաբաշխման» խնդիր, որը կարմիր թելի նման անցնում է ընդդիմադիր և կառավարող քաղաքական էլիտայի հանրային խոսույթի միջով։ Պատասխանատվության վերաբաշխման համատեքստում նախկին բարձրաստիճան պաշտոնյան անդրադարձ է կատարում մի դրվագի, երբ 2018 հակահեղափոխական իր ելույթն ուղեկցվել է հայհոյանքներով, իրեն անվանել են «ազգի դավաճան», ծխախոտ հանգցրել իր ու արևածաղկի սերմ կերել իր նկարի վրա։ Այնուհետև նախկին պաշտոնյան հավելում է. «Բայց ես չունեմ մխիթարություն, քանի դեռ երկիրս գլորվում է անդունդը և այդ գահավիժման մեղավորը պատժված չէ»։ Ասվածից կարելի է ենթադրել, որ նախկին պաշտոնյան երկրի անդունդը գլորվելու հարցում մեղավոր է համարում երկրի բարձրագույն ղեկավարությանը, իսկ որպես դրա մարմնացում և գլուխ՝երկրի ղեկավարին։ Փաստորեն, պաշտոնյան բացահայտում է «Թավշյա» հեղափոխության ժամանակ կիրառված տեխնոլոգիաների **հակասոցիալական** բնույթը։ Հետաքրքիր զուգահեռներ են անցկացվում նաև ազգային խնդիրների լուծման և սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների միջև՝վստահաբար նկատի ունենալով հարցի շարունակական շահարկումները տարատեսակ սոցիալական խմբերի կողմից։ Մասնավորապես քաղաքական գործիչը պնդում է, որ հայերիս շեղում են «տնտեսական և սոցիալական շահերի միֆերով»։ Այնուհետև հռետորական հարց է հնչեցնում. «Եթե տնտետական կապերով վերանային ազգային խնդիրները, բա ինչու՞ 88-ին սկսվեց Արցախյան շարժումը»։ Ազգային խնդիրների մասին մտահոգություններով պայմանավորված՝մշտապես ուշադրության կենտրոնում է նաև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, թեպետ չեն որոշակիացվում դրա քաղաքական և ռազմավարական չափումները։ Քաղաքական գործիչը վստահություն չի ընծայում իշխանության հավաստիացումներին առ այն, որ «Հայոց ցեղասպանության փաստը հարցականի տակ դնող իշխանություն Հայաստանում չի եղել և չկա»։ Ավելին, քաղաքական գործիչը պնդում է, որ ներկայումս

խոսք է գնում «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությունից հրաժարվելու մասին»։ Հայ-թուրքական հարաբերություններին զուգահեռ ուշադրության կենտրոնում են նաև հայ-ադրբեջանական հարաբերությունները։ Անդրադարձ է կատարվում այդ հարաբերությունների ամբողջ ներկապնակին։ Այսպես՝ «Հայ-ադրբեջանական հակամարտության սրացման ռազմաճակատը ոչ միայն ֆիզիկական է, այլ քաղաքական է ու Երևանում է»։ Քաղաքական գործիչը, հերթական անգամ առանց գործնական մեխանիզմներ կամ ճանապարհային քարտեզ ուղենշելու, հավաստիացնում է, որ «մեր հիմնական խնդիրը Երևանում իշխանություն փոխելն է»։ Որպես ասվածի տրամաբանական շարունակություն գործիչը հայտարարում է, որ «կբացվեն և՛ Ստեփանակերտի, և՛ ռազմաճակատի, և՛ բանակի, և՛ սփյուռքի մեր հայրենակիցների թոքերը»։ Ընդհանրական պատկերավոր ու զգացմունքային դիտարկումները հարցեր են առաջացնում։ Եթե Ստեփանակերտի, բանակի, սփյուռքի «թոքերը բաց» չեն, ապա ի՞նչ մեխանիզմներով ու հարթակներում է հնարավոր հասնել այս խմբերի շահերի և ուժերի համախմբմանը։ Թերևս հենց նմանատիպ հարցերի անուղղակի պատասխան գտնելու մղումով ընդդիմադիր քաղաքական գործիչը պնդում է, որ «ընդդիմության դաշտում առճակատում չկա, կա ներքին մրցակցություն, որը նույնպես տեղին չէ։ Հակադրություն չկա նաև ղեկավարների մակարդակով»։ Ընդդիմադիր էլիտայի միասնականության հավաստիացումների ֆոնին ավելի պահանջված են դառնում տարատեսակ ճանապարհային քարտեզներն ու այլընտրանքային օրակարգերը։ Առկա է ընդհանուր տպավորություն, որ ընդդիմադիր էլիտան հանդես է գալիս «պատասխանատվության վերաբաշխման» առաջամարտիկի և սուր քննադատի դիրքերից՝ռազմավարական առաջնահերթությունների և խնդիրների լուծման իր տեսլականը ներկայացնելու հնարավորությունը կա՛մ հետաձգելով, կա՛մ դրանից խուսանավելով։ Նկատելի է նաև քաղաքական ուղերձների գերզգայուն բովանդակությունը։ Այդպիսի օրինակների է Եռաբլուրը։ Ընդդիմադիր գործիչը նախնյաց արյան կանչ տալով՝ուղղորդում է հանրության հուզական ընկալումները դեպի ներքաղաքական հուն։ Նպատակ չունենալով հարցականի տակ դնել դրանց ճշմարտացիությունը կամ վերահաստատել

դրանք՝անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ վիրտուալ տարածությունում ընդդիմադիր քաղաքական էլիտան վարպետորեն օգտագործում է սուր զգացողությունների հուզական էֆեկտը որպես նպատակին հասնելու միջոցով՝անկախ նրանից այդ նպատակը մարդկանց զգացմունքայնության ազդեցության տակ որոշակի քաղաքական գործողությունները շահադրդելն է, թե՞ նրանց մեջ քաղաքացիական գիտակցության զգայունության աստիճանի բարձրացումը: Այդպիսի մի օրինակ է հետևյալ կոչը. «Եթե «Ծիծեռնակաբերդում» նկար ունեցող ամեն մի հայ գիտակցում է իր նախնու արյան կանչը, այս իշխանությունը մինչ տարեվերջ չի մնա: Հակառակ դեպքում ջնջե՛ք ձեր ընտանեկան պատմությունները»: «Պատասխանատվության վերաբաշխման» հարցը պարբերաբար երևան է գալիս ներքաղաքական քննարկումներում: Ըստ այդմ, կարող ենք տարբերակել դրանց երկու հատկանիշ: Նախ, ընդդիմադիր քաղաքական գործիչն ընդունում է նախկին կառավարության պատասխանատվությունը («մեր փայ մեղքերը հրապարակավ ընդունել ենք»): Այն, սակայն, ավելի շատ հնչում է որպես արդարացում, քանի որ նախկին իշխանության պատասխանատվությունն անմիջապես տարալուծվում է համընդհանուր պատասխանատվության գիտակցման մեջ («Հազարավոր մարդիկ էլ իրենց սխալներն են խոստովանել 2018-ի հետ կապված, այդ թվում ինձ հետ մտերմիկ ու անկեղծ զրույցներում»): Հեղափոխական իրադարձությունների նկարագրությունից պարզ է դառնում, որ դրանց ծայրահեղ բնորոշումները, անկախ նրանից, թե որքանով են համապատասխանում իրականությանը կամ իրականության աղավաղում հանդիսանում, կարող են ազդել ցանկացած ընդդիմադիր ուժի հեղինակության վրա, ուստի հեղափոխական իրադարձություններին տրված դիպուկ, բայցևայնպես սուր քննադատական գնահատականների համատեքստում («դիվային բեմադրությունների մասնակից», «Հայաստանը վերացնելու մեկնարկ» և այլն), անհրաժեշտություն է առաջանում պատասխանատվության բեռը հանրության լայն շերտերի հետ կիսելու: Այս իմաստով, պատահական չէ, որ քաղաքացիների ուշադրությունը սևեռվում է իշխանության ներկայացուցիչների անձնական հատկանիշների վրա, ինչպես օրինակ՝ «անհավասարակշիռ, դյուրագրգիռ, հիստերիկ անձ»: Զարմանալի չէ, որ այս իրավիճակում ընթացող հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման

ջանքերը բնորոշվում են որպես «հերթական գոյաբանական մարտահրավեր»։ Ներքաղաքական վերադասավորումների ու մրցակցության տիրույթում իրենց արտահայտությունն են գտնում իշխանություն ձեռք բերելու նկրտումների բացակայության մասին արված հայտարարությունները։ Ընդդիմադիր գործիչը հնչող մեղադրանքներին ի պատասխան աներկբա կերպով հայտնում է, որ «իշխանությունը զավթելու» փորձերի մեջ մեզ մեղադրելը իրականության ճչացող խեղաթյուրում է, հատկապես՝ ոչ հեռավոր անցյալում նմանատիպ փորձ ունեցող անձի կողմից»։ Ավելին, գործիչը պնդում է, որ իր քաղաքական ուժը բազմիցս ապացուցել է «պետական շահի գերակայության իմպերատիվը»։ Պետական շահի գերակայության բազմաբովանդակ տիրույթից է նաև ադրբեջանական նկրտումների ընթացքն ու արդյունքներն արծարծելը։ Ուշադրություն է հրավիրվում Արցախի՝ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքների ճակատագրի վրա, որոնք անվանվում են «օկուպացված»։ Ավելին, թերևս առաջին անգամ հայ հանրության ուշադրությունն է հրավիրվում այդ տարածքների գյուղատնտեսական նշանակության վրա. «Գաղտնիք չէ, որ այդ շրջանները ներառում էին գյուղատնտեսական նշանակության հսկայական հողեր, որոնք ապահովում էին հացահատիկի, բանջարա-բոստանային կուլտուրաների և մրգերի մեծածավալ պաշարներ»։ Այս համատեքստում, անդրադարձ կատարելով այն հարցին, թե ինչու է Ադրբեջանը պատրաստվում «Ուկրաինայում գյուղատնտեսական նշանակության հողեր վարձակալել», ընդդիմադիր գործիչը գալիս է այն եզրահանգման, որ «ադրբեջանցիները վստահ չեն, որ կարողանալու են պահպանել վերահսկողությունը Արցախի օկուպացված տարածքների նկատմամբ»։ Թեպետ գործիչն անմիջականորեն չի մատնանշում, թե որ տարածքների մասին է խոսքը, ակնհայտ է, որ դրանք չեն կարող վերաբերվել միայն Հադրութին և Շուշիին, ուստի կարելի է արձանագրել, որ հետպատերազմյան շրջանում թերևս առաջին անգամ, անանուն կերպով հողում է կատարվում Արցախի նախապատերազմական տարածքներին՝դրանք բնորոշելով «օկուպացված»։ Ներքաղաքական իրողություններին գնահատական տալու կողքին արծարծվում են նաև հոգեբանական գործոններ. «Ծանր ժամանակները ստիպում են մեզ ավելի խմբվել, զգալ կողքինի արմունկը, շուն-

չը, ներկայությունը։ Համոզվել, որ մենակ չենք։ Ներկա-բացակա անել մահաբեր 2020-ից և 2021-ից հետո։ Մարդիկ առավել քան երբևէ ունեն հուսադրող խոսքի կարիք։ Ոչ թե սինթետիկ լավատեսության»։ Առանձնանում են գերզգայուն գնահատականներ, մարդկային զգացողությունների, ներաշխարհի մեջ արտացոլվող քաղաքական իրադարձությունների գնահատականները հետպատերազմական շոկի վառ վկայություն են։ Մասնավորապես. «Կարծես բերանային խոռոչդ դարձել է Եռաբլուրի հերթական գերեզմանախորշ։ Ցավն ավելի ուժեղ է, քան տասնամյակներով ձևավորված ռեֆլեքսը...»։ Արցախի ու Հայաստանի ճակատագիրը ընդդիմադիր էլիտայի մտածումներում մեծ նշանակություն ունի, ուստի դրա մասին քաղաքական դիտարկումները հաճախ արվում են ժամանակային եռաչափության մեջ։ Անցյալի սխալներին կամ ձեռքբերումների անդրադարձը դիտարկվում է ներկայումս ընթացող գործընթացների լույսի ներքո։ Տրվում են ապագայի մասին ինչպես հոռետեսական, այնպես էլ հուսադրող գնահատականներ։ Պնդելով, որ «1993-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 4 բանաձև, որոնց նպատակը Արցախում ռազմական գործողությունները կանգնեցնելն էր, ոչ թե՝ Արցախի կարգավիճակի որոշումը»՝ ընդդիմադիր գործիչն իշխանության բացատրությունները որակում է որպես «բացահայտ ստերից մինչև ակնբախ տգիտություն, զարհուրելի կեղծիքներից մինչև նոր դավաճանություն»՝ հավելելով, որ «Արցախի հարցում իրական աղետը տեղի է ունեցել 2018-ին»։ Հայկական շահերն իմպերատիվ դիտարկող ընդդիմադիր էլիտան, այնուհանդերձ, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության օրինականության կամ դրա փոփոխության հնարավորության խոսույթ, առնվազն հանրորեն, չի վարում։ Որոշ դիտարկումների պարզ է դառնում, որ ընդդիմադիր էլիտան այն համարում է որպես անփոփոխ քաղաքական իրողություն և ձգտում է հայկական շահերի սպասարկումը տեսնել դրա ճշգրիտ իրագործման մեջ։ Այսպես՝ «Լաչինի միջանցք» «Զանգեզուրի միջանցքի» դիմաց» ադրբեջանական բանաձևին ի պատասխան ընդդիմադիր գործիչը հարցնում է. «իշխանությունում ոչ մեկի մտքով չի՞ անցել Ալիևին հակադարձել, որ Լաչինի միջանցքի կարգավիճակն ամրագրված է նոյեմբերի 9-ի հայտարարությամբ, եթե նա ուզում է փոխել դրա շահագործման նկարագիրը, խախտում է նոյեմբերի 9-ի պայմանագիրը»։ Նմանատիպ օրինակ է այն

համոզմունքը, որ եթե նոյեմբերի 9-ից հետո իշխանությունը հեռանար «հողերը չէինք հանձնի, մինչև մեր բոլոր ռազմագերիներին չբերեինք, դրսում կհետապնդեինք Ադրբեջանին ագրեսիայի համար պատժելու ողջ գործիքակազմը, թույլ չէինք տա Կուբաթլու-Զանգելան հատվածից բանավոր հրամանով ռազմավարական նշանակության հող հանձնելը և անգամ այսօր հնարավորություն կա ինչ-որ բան պահել, փրկել»: Ներհայեցողական վերաարժևորման հաջող օրինակ է նախահեղափոխական շրջանում կառավարող էլիտայի վարքաբանության քննարկումը վիրտուալ տարածության պարտադրած կերպափոխման պայմաններում, ինչի վերլուծությունը որակական նոր հարթություն է տեղափոխում ներհայաստանյան քաղաքական տեղաշարժերի վերլուծությունը ժամանակի ու տարածության բազմաչափ ընկալումներում: Այս իմաստով խիստ ուշագրավ է ընդդիմադիր քաղաքական գործչի այն տեսակետը, որ «Հայաստանում քաղաքականությունն այլասեռվեց այն ժամանակ, երբ «Ֆեյսբուքը» փոխարինեց քաղաքականությանը:

«Ֆեյսբուքի» քոմենթների մակարդակից քաղաքականությունը պետք է դուրս գա:

Եթե ժամանակին իմ օրինակով որոշ նախարարներ էլ դուրս գային «գալստուկ, պիջակ, զնաչոկ» վիճակներից և մարդկանց հետ սոցիալական ցանցերում շփվեին, հասանելի լինեին, գուցե 2018-ին մեզ չմերժեին»: Հետհեղափոխական Հայաստանի քաղաքականությունն այսպիսով դիտարկվում է որպես արժեքարաժք, իսկ նախահեղափոխական իրողություններն ու քաղաքական վարքականոնը՝քաղաքական արժեշղթայի մաս կազմող բարոյահարց: Այնուամենայնիվ, գործում է «պատասխանատվության վերաբաշխման» արդեն քննարկված ոճը՝Հայաստանի պատուհասած աղետի բուրգաձև վերաբաշխում վերևից-ներքև կամ ներքևից-վերև հավասարազոր հոսանքների փոխազդեցությունների դիտարկմամբ. չէ՞ որ «հեշտ է ապրել՝մեղադրելով ուրիշին, երբ սեփական խիղճն ու ապագայի նկատմամբ պատասխանատվությունը պատրաստ ես բթացնել»: Հստակորեն պարզաբանված համարելով պատասխանատվության վերաբաշխման հարցը՝ընդդիմադիր գործիչը հայտնում է. «այլևս չեմ հանդուրժելու պրիմիտիվ դատարկախոսություն»: Ըստ մեր դիտարկումների ցավա-

լիորեն պակաս ուշադրության են արժանացել հնարավոր պոռթկումների մասին կանխատեսումները: Մասնավորապես քաղաքական գործիչն ասում է. «Եթե մենք համաժողովրդական, զանգվածային պոռթկում չունեցանք, ապա մեր հույսը պետք է դնենք «սև կարապների» վրա:

Ես սկսում եմ սպասել «սև կարապներին», որովհետև իրավիճակը, որ ստեղծվել է Հայաստանում՝ անարդար է»: Ընթերցողին տարաբնույթ եզրահանգումներից կամ կասկածներից ետ պահելու նպատակով քաղաքական գործիչը հավելում է. «Ես չեմ ուզում ծայրահեղականություն, բայց ես կհասկանամ, եթե այս անարդարությունից ծնվի շատ ծայրահեղական ինչ-որ «սև կարապ» կամ «սև կարապներ»: Ընդ որում անհայտ է մնում արդյոք գործչի համար «սև կարապներ»-ը որոշակի քաղաքական տարրեր, ուժեր կամ անհատներ են, թե՞ «պատասխանատվության վերաբաշխման» մեր առաջարկած մոտեցման տրամաբանության ծիրում գործիչը հուշում է քաղաքացիական զանգվածներին ավելի կոշտ դիրքորոշում որդեգրելու անհրաժեշտության մասին: Ամենայն հավանականության այն պայմանավորված է նաև ընդդիմադիր ուժերի հավաքական ուժի ձևավորման դանդաղ ընթացքի կամ զգալի անորոշությունների հետ, քանի որ խոսելով ընդդիմադիր խորհրդարանական դաշինքների մասին՝ գործիչը հայտնում է հետևյալը. «Երկու ընդդիմադիր դաշինքներն էլ «սիտուացիոն» բնույթ են կրել, ստեղծվել են նախընտրական ժամանակահատվածի համար և երկարաժամկետ քաղաքական կոնստրուկցիայի տեսակետից 2-ն էլ չեն մտել դեռ իրենց դերի մեջ, ընտրություններից հետո դեռևս վերջնականորեն որպես ինստիտուցիոնալ քաղաքական կուռ միավոր չեն կայացել և հնարավոր է նաև չկայանան»: Այս քննարկումներում համատեքստում կարևոր են նախկին իշխանական-կուսակցական համակարգերի վերածնման հնարավորությունների դիտարկումները հենց նախկին կառավարող էլիտայի ներկայացուցիչների կողմից: Փորձ է արվում կուսակցությունների կամ առանձին գործիչների գործունեության քննարկումը տեղափոխել կառուցողական հուն, որտեղ խոսք է գնում «-Հայաստանին շանս տալու կենսական անհրաժեշտության մասին»: Առկա են նաև անկախ գործունեության, երկրի ապագայով մտահոգ լինելու հավաստիացումներ: Մասնավորապես գործիչը պնդում է, որ չունեն «բոլորին դուր գալու խնդիր»: Իր կուսակցության ներկայությունն ակտիվ քա-

ղաքականության մեջ քաղաքական գործիչը մեկնաբանում է սոցիալական համակարգում իրենց ունեցած կշռի գնահատումով. «Մեզ կարող եք հավանել կամ չհավանել, լսել կամ չլսել, քաջալերել կամ քննադատել, միանալ մեզ կամ մնալ մենակ: Բայց հաշվի չնստել մեզ հետ չեք կարող»: Ընդ որում հերթական անգամ բաց է մնում այն հարցը, թե որն է այն գործիքակազմը, որը կարող է ներդրվել քաղաքական գործընթացների մեջ՝ պարտադրելու քաղաքական դերակատարների հաշվի նստել կուսակցության դիրքորոշման հետ: Թերևս անուղղակիորեն հարցին պատասխան է տրվում կուսակցության գործունեության մեկ այլ գնահատականի մեջ, որտեղ գործիչը հավաստիացնում է, որ իրենց կուսակցությունը «ոչ միայն կուսակցություն է, այլ նաև քաղաքական մտքի ֆաբրիկա, որ ունակ է արտադրել քաղաքական գաղափարներ, գնահատականներ և այդ գնահատականները դարձնել ՀՀ քաղաքական դաշտի մտավոր սեփականություն:

Խոցելիության աստիճանի մեր անկեղծությունը հենց այդ պահին է խոցելի, քանզի երբ մեր կողմից բարձրաձայնված ճշմարտությունը դառնում է հանրության սեփականությունը, այդ պահից մենք դառնում ենք ավելի ուժեղ»: Այս գնահատականում ուրվագծվում են քաղաքական դաշտի կերպափոխումներում իր կուսակցության ունեցած բազմադերային գործառույթները: Ընդհանրական գնահատականների և ապագա անելիքներն ուրվագծելու տիրույթում հետաքրքիր են առաջարկվող բանաձևերը: Այսպես, քաղաքական գործիչն առաջարկում է այսպես կոչված «երեք զրոների բանաձևը», այն է՝ «0 հուսահատություն, 0 հանդուրժողականություն դավաճանների հանդեպ, 0 ամբիցիա»: Ընդ որում ակնհայտ է, որ «դավաճաններ» բառը հնչում է որպես դատավճիռ, ուստի միտված է հասարակության հուզական աշխարհի վրա ներազդեցություն գործելուն: Հնարավոր է, որ վիրտուալ տարածության հեղհեղուկությունը ծնում է իռացիոնալության որոշակի չափաբաժին, որի կիրառումը քաղաքական խոսույթում տրանսֆորմացիոն դեր է կատարում ռացիոնալի և իռացիոնալի, հիմնավոր ու փաստարկվածի ու հուզախառն պոռթկումների սահմանագծում: Այլ խոսքով, վիրտուալ տարածությունը թելադրում է հուզական-ռացիոնալ-արժեքաբանական կողմնորոշիչների յուրօրինակ համակարգ, որը գենեռացնող քաղաքական դերակատարն ինքն է դառնում և՛

«մտքերի ֆաբրիկա» ու դրանց պահանջարկի ձևավորման կատալիզատոր, և՛ դրանք սպառող։ Իրականության զգացմունքային ընկալումների տեղատարափը վիրտուալ տարածությունում կրում է բազմամակարդակ բնույթ։ Մասնավորապես խոսելով Արևելյան Գործընկերության գագաթնաժողովի եզրափակիչ բանաձևի մասին՝ գործիչը հայտնում է, որ «ադրբեջանական ագրեսիայից հետո Հայաստանը ուներ բոլոր հիմքերը եվրոպական այս ձևաչափում հասնել ագրեսորի նկատմամբ ԵՄ դիրքորոշման կարծրացմանը, ինչը տեղի չի ունեցել»։ Ավելին՝«ԵՄ-Ադրբեջան հարաբերություններում արձանագրվեց, որ նոր համապարփակ համաձայնագրի նախապատրաստումը որևէ կերպով չի ներառելու Ադրբեջանի պատասխանատվությունը 44-օրյա պատերազմի և Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելու համար»։ Նմանատիպ դիտարկումները շաղկապում են երկրի ներքաղաքական ճգնաժամը նրա արտաքին քաղաքական ձախողումների հետ։ Օրվա իշխանությունն ուղղակիորեն դիտարկվում է որպես բոլոր ձախողումների պատասխանատու։ Ընդ որում, առավել անձնական բնույթ կրող զգացմունքային պոռթկումները, որոնք անարգանքի սյունին են գամում օրվա իշխանությանը, ընդհուպ անձնավորում են քաղաքական գործընթացները։ Պատասխանատվության վերաբաշխման քաղաքական գործընթացից անմասն չեն մնում նաև մտավորականները։ Անդրադարձ կատարելով բազմահազար զոհերի առկայությանը, գերզգայական գնահատականներ հնչեցնելով գործող իշխանության մասին, մեղադրելով վերջինիս հարսանյաց արարողությունները թաղումներով փոխարինելու ու գերիների հարցով չզբաղվելու մեջ՝ քաղաքական գործիչը հեգնում է. «Մտավորականների խավը ցավոք, «Կարմիր գրքում» է այլևս։ Եկել է հայ ժողովրդի խեժի, սերուցքի ժամանակը»։ Հետաքրքիր են նաև ներքաղաքական տարատեսակ դերակատարների գործողություններին տրվող գնահատականները։ Մասնավորապես ընդդիմադիր ուժերից մեկի գործողությունները բնորոշվում են որպես «ամոթալի, երկդիմի, հերթական հաճախորդական»։ Ավելին, մատնանշվում է այն հանգամանքը, որ ընդդիմադիր գործչի սոցիալական մեդիայում արված գրառումներից մեկը «կարող է նոր ռիսկերի մասին վկայել»։ Ակնհայտ է, որ վստահության մթնոլորտի բացակայությունն առկա է ոչ միայն իշխանություն-ընդդիմություն հակասությունների տիրույթում, այլև ընդդիմա-

դիր ուժերի ու գործիչների միջև։ Հնարավոր է, որ ընդդիմադիր դաշտի միավորմանը խանգարում են հենց քաղաքական դերակատարներին ներքին, սոցիալական հակասությունները, տարատեսակ շահային խմբերի հետ նրանց փոխկապակցվածությունը, որն էլ քաղաքական հարաբերությունների ռացիոնալ դիտարկումների տիրույթում հարցականի տակ է դնում ազատ քաղաքական հարաբերություններ կառուցող հասարակություններում ինստիտուցիոնալ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը։ Ասվածից հետևում է նաև, որ մեծանում է հասարակության տարբեր շերտերի՝ անորոշությունների հորձանուտում հայտնվելով մանիպուլացվելու հավանականությունը, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել առկա տուրբուլենտության մշտամնա վիճակին, երբ քաղաքական դերակատարների իռացիոնալ քաղաքական վարքաբանությունը հանգեցնում է ներքաղաքական կողմնորոշիչների փոփոխականության խիստ բարձր մակարդակի՝ անվերջ մակածելով ներքաղաքական անորոշությունները որպես քաղաքական իրականության գնահատման ձև։ Կարևոր է արձանագրել, որ այնուհանդերձ ընդդիմադիր գործչի կողմից փորձեր են արվել քաղաքական երկխոսության հրապարակայնություն ապահովելու համար։ Մասնավորապես՝ քաղաքական գործիչը նշում է, որ իշխանությանը «հրապարակավ ձեռնոց» է նետել «Արցախի հարցով բանավիճելիու համար»։ Կարելի է եզրակացնել, որ առաջարկը նպատակ է հետապնդել մեծացնել քաղաքական խաղադրույքները, ինչն անխուսափելիորեն կհանգեցներ քաղաքական ջրբաժանի կա՛մ ավելի խորացմանը, կա՛մ համատեղ լուծումների փնտրտուքին՝ արագացնելով ներքաղաքական տրանսֆորմացիաների փուլը։ Այնուամենայնիվ, առաջարկն անպատասխան թողնելով իշխանությունը հրաժարվել է տուրբուլենտության ելքերը համատեղ կառավարելիության ոլորտ տեղափոխելու ընդդիմադիր գործչի առաջարկից՝ սահմանելով քաղաքական հարաբերություններում ֆորմալ աստիճանակարգման հանրային չափումը որպես գործոն։ Վիրտուալ տարածությունը դարձնելով հանրության հետ երկխոսության միջոց՝ քաղաքական գործիչն ուշադրություն է հրավիրում գործող իշխանության կեցվածքի վրա, որը միջազգային հարթակներում անդրադարձ չի կատարում Հայաստանի կենսական շահերին ու դրանց ոտնահարմանը, այն

հարցին, «որ ավտորիտար Ադրբեջանն ու Թուրքիան հարձակվել են մեզ վրա։ Որ «քաղաքակիրթ» աշխարհը աչք փակեց այդ փաստի վրա։ Որ Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքները ոտնահարվում են Ալիևի կողմից»։ Այս համատեքստում կարևոր է նախադեպերի զննությունը։ Միջազգային հարթակներում Հայաստանի շահերի առաջ մղման համատեքստում։ Նախկիններին և գործող իշխանության դիխոտոմիային քաղաքական արժեքաբանության բովանդակության տեսակետից դիտարկելու մղումով քաղաքական գործիչը պնդում է, որ «2014 թվականի մայիսի 29-ին Աստանայում՝ Եվրասիական տնտեսական խորհրդի ընդլայնված նիստին, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը ընթերցել էր Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի նամակը, որի նպատակն էր սադրել Հայաստանին և կանխել մեր անդամակցությունը ԵԱՏՄ-ին։ Չտրվելով սադրանքին, Սերժ Սարգսյանն այդ պահին չարձագանքեց, և Հայաստանն անարգել մտավ ԵԱՏՄ։ Հայաստանի համար հարց լուծվեց»։ Այսպիսով պատասխանատվության վերաբաշխման և պետական շահերի քննարկման հատման կետում քաղաքական գործիչը նախկին իշխանության վարքաբանությունը միջազգային քաղաքական դաշտում դիտարկում է կառուցողականության և պետական ու ազգային շահերը սպասարկելու իմաստով։ Նույն համատեքստում քաղաքական գործիչը հայտնում է, որ «Այսօր ԵԱՏՄ ղեկավարների մասնակցությամբ մեկնարկել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստը, որի ընթացքում Նազարբաևը ասաց, որ հնարավոր է համարում Ադրբեջանի հետ բանակցությունը, որպեսզի վերջինս ևս դառնա ԵԱՏՄ դիտորդ երկիր։ Նազարբաևի որակմամբ, Ուզբեկստանի օրինակը, որն արդեն միացել է որպես դիտորդ, պետք է ոգեշնչող լինի Ադրբեջանի համար»։ Այս հանգուցակետում, զուգահեռներ անցկացնելով նախկին և ներկա իշխանությունների վարքաբանության մեջ, քաղաքական գործիչը մեղադրում է գործող իշխանությանը նրանում, որ նա «որևէ կերպ չարձագանքեց Նազարբաևի՝ Ադրբեջանին ուղղված բանավոր հրավերին»։ Միջազգային խնդիրների քննարկման ծիրից դուրս չի մնում նաև Հայոց ցեղասպանության հարցը։ Քաղաքական գործիչը մեղադրում է գործող իշխանությանը այն բանում, որ վերջինս «հրաժարվում է ոչ միայն Արցախից, այլև Հայոց ցեղասպանության հարցից»։ Անդրադարձ կատարելով Հայաստանի արտգործնա-

խարարության՝ Ցեղասպանության զոհերի հիշատակի միջազգային օրվա կապակցությամբ արված հայտարարության տեքստին, քաղաքական գործիչը նշում է, որ «բացարձակապես չկա որևէ հիշատակում Հայոց ցեղասպանությունը կազմակերպած ոճրագործ պետության մասին: Չկա ո՛չ Օսմանյան կայսրությունը, ո՛չ Թուրքիան: Չկան»: Այս դեպքում, սակայն, զուգահեռներ չեն անցկացվում նախկինում արված նմանատիպ հայտարարությունների հետ: Հայաստանի անվտանգության, Արցախի ճակատագրի, Հայոց ցեղասպանության, Հայաստանի և արտաքին աշխարհի փոխհարաբերությունների թեմաներն օրինաչափորեն կապվում են միմյանց հետ՝ փոխլրացնելով ընդդիմադիր գործչի գնահատականները: Երկրի ապագային ու արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերում հիշատակվում են նաև տարածաշրջանային գործընթացներ: Այս իմաստով կարևոր է այն դիտարկումը, որ «ցանկացած տարածաշրջանային համագործակցության ֆորմատ ընդունելի է, եթե պետության շահն առաջ տանելու հնարավորություն և օրակարգ ունենք, սակայն «3+3» ֆորմատը իրատեսական չի»:

Երկրորդ քաղաքական գործիչը քննադատության թիրախում հայտնվում են իշխանության մաս կազմող բոլոր կարևոր օղակների գործողությունները, հատկապես եթե դրանք առնչվում են պետության՝ որպես համընդհանուր անվտանգությունն ապահովող ինստիտուտի գործառույթներին: Չորոշակիացնելով, թե ի՞նչ վերազգային կամ միջազգային օղակների հետ ու ինչպիսի՞ ձևաչափով համագործակցության եզրեր փնտրելու կամ մոտեցումներ ճշգրտելու անհրաժեշտություն կա՝ նախկին պաշտոնյան հայտնում է հետևյալը. «Ուղղակի հետաքրքիր է. Ղազախստանում առկա իրավիճակով ձևական հետաքրքրվելուց հետո, Արմեն Սարգսյանը, որպես պետության գլուխ, որևէ մեկի հետ հեռախոսազրույց ունեցե՞լ է, այս պահին ՀՀ հյուսիս-արևելյան սահմանին, Ադրբեջանի կողմից հրահրված մարտական գործողությունների թեմայով»: Վիրտուալ տարածությունում այսպիսով ձևավորվում է անորոշությունների նոր ալիք, երբ ընդդիմադիր էլիտան, հանդես գալով պահանջատիրոջ դիրքերից, իր արդարացի անհանգստությունը քողարկում է անհասցե ձևակերպումների տակ՝ չառաջարկելով հանրորեն ընկալելի այլընտրանքային լուծումներ, քաղաքական վարքականոն կամ այլընտրանքային օրակարգ:

Կոշտ և ուղիղ քննադատության երթարկելով գործող իշխանությանը արցախյան վերջին պատերազմում պարտության համար՝ընդդիմադիր էլիտան գիտակցում է պատասխանատվության հարցի լուծման կարևորությունը: Վստահաբար այս հույժ կարևոր հանգամանքով պայմանավորված՝անդրադարձ է կատարվում 2018 թվականի իրադարձությունների, «Թավշյա» հեղափոխության արդյունքում տեղի ունեցած իշխանափոխության գործում նախկին կառավարող էլիտայի պատասխանատվության չափաբաժնի վճռմանը: Առերեսվելով այն փաստի հետ, որ «շատերը սկսել են» նախկին կառավարող էլիտային «մեղադրել» իշխանափոխության հարցում, նախկին պաշտոնյան պնդում է, որ այն «հնարովի կեղծիք է և զավեշտ»: Ակնհայտ է, որ պաշտոնյան որևէ կապ չի տեսնում «Թավշյա» հեղափոխության և նախկին կառավարող էլիտայի կառավարման արդյունավետության մեջ, ինչպես նաև հրաժարվում է հեղափոխության ծնող պատճառների, դրա ընթացքի, վրա վերջնարդյունքի, հեղափոխական շարժման կառավարման նկատմամբ որևէ պատասխանատվությունից: Հարևան պետությունների հետ կայուն խաղաղության հարցում որպես պատմական նախադեպ բերվում է Իսրայելի օրինակը, որը փորձեց խաղաղություն հաստատել՝ համոզված լինելով «պատերազմի անհավանականության մեջ», որից հետո հրեաները «ստիպված եղան ընդամենը 6 ժամում համընդհանուր զորահավաք անել և մտնել գոյության հերթական պայքարի մեջ»: Քիչ չեն ապագային միտված դիտարկումները: Հատկանշական է, որ կարմիր թելի նման անցնում է 2018 թվականի «Թավշյա» հեղափոխությունը որպես լավի ու վատի միջև առաջացած ջրբաժան: Այդպիսի համեմատություններից է հետևյալը. «2018-ից փակված դռան հետևում շողացող լույսը, մի օր անխուսափելիորեն տարածվելու է մեր երկրի վրա: Խնդիրը միայն դուռը բացելու մեջ է»: Քաղաքական զարգացումներն այսպիսով ստանում են փոխաբերական բնույթ, կիրառվում են հանրության լայն շերտերի լեզվամտածողության մեջ առկա «փակ դուռ» և «շողացող լույս» հասկացությունները որպես քաղաքական անկման ու վերելքի խորհրդանիշ: Ինչպես տեսանելի այլ համեմատությունների դեպքում, «դուռը բացելու» հասցեատերն ու նրանից ակնկալվող քաղաքական գործիքակազմի կիրառման ձևերն ու տեսակները մնում են վերացարկված, չհասցեագրված: Մշտապես քննադատության թիրախում պահելով գոր-

ծող իշխանության ներքին ու արտաքին քաղաքականությունն ու դրա հետևանքները՝ ընդդիմադիր էլիտան վիրտուալ տարածությունը գերզգայուն դարձնող հանրային տրամադրություններ է կրում և զարգացնում։ Մասնավորապես, ուշադրության կենտրոնում են մարդու ներաշխարհի, նրա ազգային ինքնության ու քաղաքակրթական, խմբային պատկանելության այնպիսի հիմքեր, ինչպիսիք են հայրենիքը, հողը, զինվորը և այլն։ Այսպես՝ «Երբ երիտասարդ Զինվորդ զոհվում է, որպեսզի Հողը, Հայրենիքը, Հավատքը և Ազգը հարատևի ազատ ու անվտանգ՝ դա մարդկային առաքելության ամենավեհ և անգերազանցելի դրսևորումն է։ Դա Հայրենիքի սրբագործման, անփոխարինելիության ու հավերժության հաստատումն է։ Իսկ երբ երիտասարդ Զինվորդ զոհվում է, որպեսզի իրենից հետո, է՛լ ավելի սրբացած Հողը հանձնես, թշնամու թելադրած պայմաններով ճամփա բացես ու միայն փող աշխատելու և լափելու մասին մտածես՝ դա մարդկային ցեղի անգերազանցելի ստորությունն է»։ Հայրենասիրական վեհության ու հայրենիքի առաջ ստորության քննարկումը զուգորդվում է ապագայաբանական կանխատեսումների հետ, որոնցում թուրքը ներկայանում է որպես հեռատես հայերին տնտեսական զարգացման հնարավորություններից զրկելու հարցում, իսկ ֆինանսական դրության հնարավոր բարելավումը կապվում է կառավարող էլիտայի նեղ խմբային շահերի հետ։ Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ հայրենիքի վեհության ու նրա նկատմամբ գործած ստորության քննարկմանը հաջորդում է խիստ կենցաղային բառամթերքով նկարագրությունների շղթան՝ թերևս պայմանավորված վիրտուալ տարածության անձնական տիրույթի ընձեռած արտահայտման ազատությամբ։ Այդպիսի դիտարկումներից կարելի է առանձնացնել «Կապիտուլյանտ բանակցողից ե՞րբ է օգուտ եղել, որ քեզանից լինի»-ն կամ «Դերասանությունդ էլ չի օգնում։ Քեզանից բանակցող դուրս չի գա, ինչքան ուզում ես փորձի»-ն։ Այս պարագան նաև հիմք է հանդիսանում քաղաքական գործիչների, կառավարող և ընդդիմադիր էլիտայի վիրտուալ տարածությունը քաղաքականացնող հանրային նշանակություն ունեցող հայտարարությունների լեզվաբանական-մշակութաբանական ուսումնասիրության ենթարկելու, դրա սոցիալական նշանակության արժևորման չափանիշների մշակման համար, որը, սակայն, չի

հանդիսանում սույն հետազոտության նպատակներից մեկը, դուրս է նրա առարկայի և օբյեկտի տրամախոսության ծիրից։ Հետաքրքիր զուգահեռներ են տարվում երկրի անվտանգային և քաղաքական ինստիտուտների միջև։ Այսպես՝ «ներքաղաքական իրավիճակը, իշխանությունների անկարողությունն ու թուլամորթությունը ազդում են նաև բանակի վրա։ Մեր բանակը քաղաքական ուժեղ իշխանություն չի տեսնում թիկունքում, բայց ուրախ եմ, որ բանակի ներսում, ի շնորհիվ միջին օղակի զինվորականների, որոշակի ոտքի կանգնելու, մեջքերն ուղղելու բարոյահոգեբանական իրավիճակ եմ տեսնում, որը ապագայի նկատմամբ ռազմական տեսակետից մի փոքր հույս է տալիս, իսկ քաղաքական առումով՝ որևէ դրական տեսլական ապագայի նկատմամբ գոյություն չունի, քանի այդ հարցը կապված է կապիտուլյանտների հետ»։ Փաստորեն բացահայտվում է երկրի քաղաքական ինստիտուտների, կուսակցական համակարգի թերֆունկցիան, քանի որ բանակում ներքին տեղաշարժերն իզոլացված բնույթ են կրում, փոխկապակցված չեն քաղաքական տարատեսակ միավորների կերպափոխումների հետ, իսկ վերջիններս մեծ հաշվով բացակայում են։ Կարևոր է նշել, որ իդեալական և կործանված Հայաստանի մտապատկերների գենեռացումը, սակայն, զուգորդվում է միջազգային քաղաքական իրողությունների ազդեցության գնահատման, ներքին ու արտաքին քաղաքական հրամայականների ու առաջնահերթությունների հետ։ Քաղաքական խոսույթին ավելի խորքային բովանդակություն հաղորդելու նկատառումով դիտարկվում է արտաքին քաղաքականություն-անվտանգություն-ներքին քաղաքականություն եռանկյունու փոխադարձաբար պայմանավորված լինելու հարցը։ Այսպես՝ «նույնիսկ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի առցանց նիստի օրը չկաշկանդեց Ադրբեջանին, հերթական հարձակումը գործել Հայաստանի արևելյան սահմանների ուղղությամբ»։ Եվրասիական տարածությունում հայկական շահերի նկատմամբ ոտնձգությունների դեմ մեխանիզմների գործառնման հնարավորության բացակայությունը կապվում է ներքաղաքական իրողությունների հետ. «Ադրբեջանը շարունակելու է անընդհատ հարձակումներ գործել ՀՀ արևելյան սահմանի տարբեր ուղղություններում…Փոխե՛ք ապաշնորհ ղեկավարներին և կփոխվի նաև վերաբերմունքը պետության նկատմամբ։ Սա համաշխարհային քաղաքականության մեջ

բազմիցս ապացուցված փաստ է»։ Ընդդիմադիր էլիտայի պահանջատիրությունն այսպիսով ուղղվում է քաղաքացուն, ում կոչ է արվում փոխել իշխանությունը։ Ակնհայտ է, որ ընդդիմադիր էլիտայի ներկայացուցչի կողմից այլ հասցեատեր վերանոշյալ կոչն ունենալ չի կարող։ Այնուամենայնիվ, գործիչը չի մատնանշում, թե ընդդմադիր էլիտայի կոչին հետևող հանրությունն ի՞նչ գործիքակազմ ունի իշխանափոխության համար, մանավանդ, որ գործիչը հղում է կատարում իրավական գործընթացների՝ պնդելով, որ զինվորականներին կամ գերեվարված անձանց դատելն «առնվազն անբարո» է «մինչև չքննվեն ու իրավա-քաղաքական գնահատականի չարժանանան պատերազմը միտումնավոր ձախողելու և հողերը հանձնելու» իշխանության գործողությունները։ Տպավորություն է, որ նախկին կառավարող էլիտան ինքն է վարում նախկին-ներկա դիխոտոմ խոսույթը հանրային ընկալումները շահարկող իր գործիքակազմն ընդլայնելու փորձով։ Մի կողմից երևան են գալիս հայրենիքի ճակատագրով մտահոգ լինելու քաղաքացիական ակտիվ դիրքորոշվածությամբ պայմանավորված նոստալգիկ տրամադրությունները ոչ վաղ անցյալում գոյություն ունեցած Հայաստանի Հանրապետության հետ, որտեղ «խորհրդարանական լսումներում քննարկում էին, թե ինչպես ակտիվացնել օտարերկրյա ներդրումները Հայաստանում և Արցախում»։ Մյուս կողմից՝ փորձ է արվում նախկին քաղաքական իրողությունների նկատմամբ նոստալգիկ տրամադրվածություն ստեղծելուց զատ ցույց տալ ներկայիս իրողությունների ողբերգականությունը, քանի որ «դավաճանների իշխանությունը խորհրդարանական լսումների թեմաներ է դարձրել գերիների, Հայաստանի սահմանների օկուպացիայի, դավաճանված պատերազմի, սահմանների անպաշտպանության հարցերը և նմանատիպ այլ հարցեր»։ Ակնհայտորեն, ծայրահեղ իրողությունների նկարագրության համադրությամբ ձևավորվում է իդեալակ և կործանված Հայաստանի մտապատկերների հակասություն։ Քաղաքական դիրքորշումների հստակեցումները, սակայն, նպաստում են նաև հանրային տարատեսակ սոցիալական խմբերի նկատմամբ վարվող տեղեկատվական քաղաքականության կոշտացման, որոնք նախկին կառավարող էլիտային հնարավորություն են տալիս քաղաքական իրողությունների զուգամիտվող համեմատական վերլուծութ-

յան արդյունքում հանդես գալու պահանջատիրոջ դիրքերից։ Այսպես, հատկանաշական է հետևյալ կոչը. «Երբեք չհամեմատեք ներկա որևէ բան՝ նախկինում եղածի հետ։ Դրանով ոչ միայն վիրավորում եք նախկիներին, այլ նաև մահացու մեղք եք գործում Ձեր խղճի և Աստծո առաջ։ Նախկինում դուք ունեիք Հայրենիք, անվտանգություն, կայունություն և ազգային արժանապատվություն։ Այսինքն՝ Մարդ էիք, ինքնիշխան պետության պաշտպանված քաղաքացի։

Իսկ այսօր ի՞նչ ունեք, և ի՞նչն եք ինչի հետ համեմատում»։ Հատկանշական է, որ հանրություն-նախկին կառավարող էլիտա երկխոսության այս ձևաչափում պահանջատիրոջ դիրքերից հանդես եկող նախկին էլիտան այսպիսով լուծում է նաև երկրի քաղաքական ճակատագրի հարցում քաղաքացու պատասխանատվության հարցը։ Եթե նախկինում քաղաքացին պաշտպանված էր, «Մարդ» էր, ապա այսօր նա նախկին իր կարգավիճակի հետ համեմատ ոչինչ չունի, «անմարդացել» է քաղաքական ներքին ու արտաքին հակամարտող ուժերի բախումնածին, պատերազմական ու հետպատերազմական շրջանի վարքից, դիրքորոշումներից։ Ի հակակշիռ պաշտոնաբաղձության կամ ազգապառակտիչ գործունեության հնարավոր մեղադրանքների՝ակնհայտ փորձ է արվում Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հետևանքների քննարկումը դուրս բերել ներքաղաքական հունից և այն ուղղորդել միջազգային իրավունքի ու քաղաքականության տիրույթ ևս։ Այս դիտանկյունից հատկանշական է պատերազմի ու դրա հետևանքների բազմակողմանի գնահատականը. «-Պատերազմը, որտեղ կիրառվում էին միջազգային իրավունքով արգելված զինատեսակներ, աղետալի հետևանքներ ունեցավ իմ ժողովրդի համար՝ խլելով հազարավոր երիտասարդների կյանքեր, անօթևան թողնելով տասնյակ հազարավոր մարդկանց, թշնամական գերության մեջ նետելով մեր հարյուրավոր հայրենակիցների, որոնց գերակշիռ մասին Ադրբեջանը մինչ օրս, պատերազմից ավելի քան մեկ տարի անց, պահում և խոշտանգումների է ենթարկում Բաքվի բանտերում»։ Նմանատիպ կոչերը մեր համոզմամբ եռակի նշանակություն ունեն։ Նախ, դրանք վերահաստատում են կառավարող և ընդդիմադիր էլիտայի մաս կազմող ուժերի, գործիչների, նախկին նախագահների ու պաշտոնյաների՝իրենց տրանսենդենտալ գործառույթներին հավատարմությունը։ Երկրորդ, ազգային ու պետական

խնդիրների, աղետների, քաղաքական վայրիվերումների՝քաղաքական տուրբուլենտության, ներքաղաքական ու արտաքին քաղաքական գործընթացների նկատմամբ դիրքորոշվածության հստակեցումները քաղաքական նպատակահարմարությունից ելնելով խաղի տրամաբանությունն ի օգուտ ընդդիմադիր էլիտաների վերաթողարկելու հնարավորություն են ընձեռում: Եվ վերջապես, ներքաղաքական դաշտի ազգապառակտիչ դաշտը մի կողմից ենթարկվում է դիրքորոշվածության բյուրեղացման, մյուս կողմից՝վերաձևակերպվում է որպես հնարավոր երկխոսության հարթակ՝համաձայն ազգային շահերի և ողբերգության ընկալումների համադրության: Այս իմաստով նաև հասկանալի են օտարերկրյա գործընկերներին ուղղված կոչերն առ այն, որ անհրաժեշտ է «անվերապահորեն պաշտպանել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ մոտեցումը՝ կառուցված հիմնարար սկզբունքների վրա, որոնք բազմիցս հնչեցվել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից»: Ակնհայտ է, որ չնայած պաշտոնական հաղորդագրությունների հնարավոր բովանդակային տարամիտումներին միջազգային քաղաքականության խորքային ընկալումը վերաարժևորում է նախկին ղեկավարների ունեցած գործառութային բազմաձևությունը: Պետական քաղաքականության տիրույթում առանձնահատուկ տեղի ու դերի գիտակցում է ուրվագծվում պետության նախկին ղեկավարների կերպարի շուրջ: Երկրի նախկին ղեկավար գործունեությանն առնչվող հարցերում կա այն հարցի գիտակցումը, որ պետության ղեկավար հանդիսացած անձի պատասխանատվությունը հայրենիքի ճակատագրի առաջ չի սահմանափակվում նրա պաշտոնավարման սկզբով կամ ավարտով: Փաստորեն պետության ղեկավարն իր ֆունկցիոնալ բազմակողմանիությամբ տրանսենդենտալ երևույթ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտության հիման վրա եկել ենք հետևյալ եզրահանգումների՝

✓ Սոցիալական մեդիան դարձել է քաղաքական հաղորդակցության գործիք, սակայն դրա ցանցային հնարավորությունները լիարժեք օգ-

տագործված չեն. քաղաքական երկխոսության և քննարկումների հարթակների փոխարեն գործ ունենք առավելապես զգացմունքային մենախոսության հետ

✓ Եթե սոցիալական մեդիան դիտարկենք որպես ռացիոնալի և իռացիոնալի հատման կետ, ապա պարզ չէ, թե ինչ ճանապարհային քարտեզով և գործիքակազմով են ընդդիմադիր քաղաքական էլիտայի բերկայացուցիչներն ուղղորդում իրենց համախոհներին

✓ Ֆեյսբուքյան խոսույթը չի ձևավորում օրակարգ կամ տեսլական, չունի ընդհանուր ուղենիշներ, իսկ հիմնական օրինաչափություններից է «պատասխանատվության բաշխումը», երբ ընդդիմադիր էլիտան իր կառավարման ժամանակաշրջանի բացթողումները տարրալուծում է հանրության լայն շերտերի մեջ

✓ «Ֆեյսբուքի» օրինակով կարելի է եզրակացնել, որ սոցիալական մեդիան ՀՀ-ում չի հանդիսանում ո՛չ որպես իշխանության այլընտրանքային ձև իր կազմակերպչական, հաղորդակցական հնարավորություններով, ո՛չ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ

✓ Անհրաժեշտություն է առաջացել կուսակցությունների կայացման հիմնախնդիրներին զուգահեռ կարևորել քաղաքացիական հասարակության ինստիտուտների քանակական և որակական ընդլայնումը: Որպես այդպիսին առաջարկում ենք դիտարկել Հայ առաքելական եկեղեցին, ավանդական ու նորաստեղծ գաղափարահեն կուսակցությունները, բանակային կրթական ու ռազմամարզական կառույցները, ինչպես նաև սոցիալական մեդիայում խոսույթ ձևավորող դերակատարներին (օր.՝ուսանողական խմբեր, սոցիալական հարցերի մասնագետներ):

Гарик Погосян, Дискурс оппозиционной элиты послевоенной Армении на Фейсбуке как средство расшифровки внутренных проблем - Данная статья, возможно, является первой попыткой проанализировать контент армянской оппозиции в социальных сетях в послевоенной Армении (с 2020 года). Придавая большое значение преобразующей силе социальных сетей, мы использовали качественный контент-анализ, чтобы расшифровать коммуникативную значимость политического дискурса, который вели два видных лидера армянской оппозиции, которые входили в состав предыду-

щей правящей элиты страны. В статье освещается проблема “общей ответственности” и подчеркивается неразвитость политических партий Армении. Несмотря на то, что платформы социальных сетей создают возможности для новых форм гражданской активности, незрелость политических деятелей не предлагает альтернативы национальной политической повестке дня. Таким образом, в статье подчеркивается необходимость рассмотрения вопроса о количественном и качественном расширении организаций гражданского общества (молодежных групп, традиционных и нетрадиционных политических партий, Армянской Апостольской церкви, военных организаций и т.д.).

Garik Poghosyan, The Discourse of the Elite Opposition of post-War Armenia on Facebook.as a Means to Decipher Internal Issues - The article is arguably the first attempt to analyze the social media content of the Armenian opposition in post-war Armenia (since 2020). Having attached great importance to the transformative power of social media, we have made use of qualitative content analysis to decipher the communicative significance of the political discourse led by two prominent leaders of the Armenian opposition who used to form part of the previous governing elite in the country. The article brings to light the problem of “shared responsibility” and highlights the underdeveloped state of Armenian political parties. Even though social media platforms create an opportunity for new forms of civic activism, the immaturity of political actors does not offer an alternative to the national political agenda. Thus, the article underscores the necessity to consider the quantitative and qualitative expansion of civil society organizations (youth groups, traditional and non-traditional political parties, the Armenian Apostolic Church, military organizations etc.)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Chomsky N**., Media Control: The Spectacular Achievements of Propaganda, Open Media Pamphlet Series, 1997

2. **Edelman M.**, The Politics of Misinformation, Communication, Society and Politics Series, W. Lance Bennett and Robert M. Entman (eds.), Cambridge University Press, 2001

3. **Feenberg A.**, Great Refusal or Long March How to Think About the Internet in Christian Fucks and Marisol Sandoval, Critique, Social Media and the Information Society, Routledge Studies in Science, Technology and Society, 2014

4. **Feldman O. and Zmerli S**. (eds.), the Psychology of Political Communicators: How Politicians, Culture, and the Media Construct and Shape Public Discourse, Routledge, 2019

5. **Fucks Ch.**, Culture and Economy in the Age of Social Media, Routledge, 2015

6. **Himelboim I.**, Civil Society and Online Political Discourse: The Network Structure of Unrestricted Discussions, Communication Research XX(X) 1 – 26 © The Author(s) 2010 Reprints and permission: http://www.sagepub.com/ journalsPermissions.nav DOI:10.1177/0093650210384853 http://crx.sage pub.com

7. **Jones K.**, International Law Programme | November 2019, Online Disinformation and Political Discourse Applying a Human Rights Framework, Chatham House, the Royal Institute of International Affairs

8. **Lee Kaid L. and Holtz-Bacha Ch.**, "Dramatistic Approaches to Political Communication", Encyclopedia of Political Communication: Volume 1&2, Sage Publications, 2008

9. **Lilleker D. G.**, Key Concepts in Political Communication, Sage Publications, 2006

10. **McNair B.**, An Introduction to Political Communication, Third Edition, Routledge, 2003

11. **Salem S.**, "Creating Spaces for Dissent: The Role of Social Media in the 2011 Egyptian Revolution" in Daniel Trottier and Christian Fucks (eds.), Social Media, Politics and the State: Protests, Revolutions, Riots, Crime, and Policing in the Age of Facebook, Twitter and Youtube, Routledge, 2015

12. **Մելիքյան Ռ.**, Միջազգային քաղաքական հաղորդակցությունների հիմնախնդիրները տեղեկատվական անվտանգության հարացույցում, ԵՐԵՎԱՆ, հեղինակային հրատարակություն, 2020, 237 էջ

13. **Օրդուխանյան Է.**, Քաղաքական խոսույթի հիման վրա հետ-խորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերի գնահատման հնարավորություններն ու խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես, 1(2), 2015, 59-83

Ուղարկվել է խմբագրություն 24.06.2024թ.
Գրախոսվել է 01.07.2024թ.
Ստորագրվել է տպագրության 02.07.2024 թ.